ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշմի 1

№ 3467-Ա «11» սեպտեմբերի 2024 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆՆ ԱՎՍՏՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱՑ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Ասիական զարգացման բանկի և Ավստրիայի Գրացի տեխնոլոգիական համալսարանի կողմից ստացված հրավերը՝ «Կայուն քաղաքային տրանսպորտ» խորագրով դասընթացին մասնակցելու նպատակով և ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով.

1. Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը 2024 թվականի սեպտեմբերի 23-29-ը, գործուղել Ավստրիայի Հանրապետության Գրաց քաղաք՝ հետևյալ կազմով.

Վազգեն Հարությունյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ
Անետա Բաբայան	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար
Բաբկեն Սեդրակյան	«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

2. Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է հրավիրող կողմը:

3. Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետ Վազգեն Հարությունյանի բացակայության ընթացքում վարչության պետի պարտականությունները վերապահել տրանսպորտի վարչության հասարակական տրանսպորտի կարգավորման բաժնի պետ Հարություն Մելքումյանին:

4. «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Անետա Բաբայանի բացակայության ընթացքում տնօրենի պարտականությունները վերապահել նույն ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ Արմեն Հովհաննիսյանին:

5. «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Բաբկեն Սեդրակյանի բացակայության

ընթացքում տնօրենի պարտականությունները վերապահել նույն ՓԲԸ-ի երթևեկության գծով տնօրեն Սամվել Ծառուկյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ